

ՂԵՐԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՈՒ

Յ. Խ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկը լեզվական և ոճական առումով միջնադարյան պատմագրության արժեքավոր գործերից է: Դժվար է պնդել, թե այն շարադրված է հին և միջնադարյան գրաբար մատենագրության ավանդական լեզվով: Դիշտ է, երկում առավելապես իշխող են գրաբարյան տարրերը, սակայն այն զուրկ չէ ժամանակի ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ ձևերից:

Ասենք, որ այս պատմությունն աչքի է ընկնում ոչ միայն հարուստ բառապաշարով, որն առանձին ուսումնասիրության է արժանի, այլ և քերականական ամենաբազմազան իրողություններով: Աշոտ Աբրահամյանը, որն այս երկի աշխարհաբար թարգմանիչն է, խոսելով երկի լեզվի և ոճի մասին, մասամբ անդրադարձել է թե՛ բառային, թե՛ քերականական իրողություններին: Սակայն մեր այս հոդվածը մի փորձ է ներկայացնելու Օրբելյանի պատմության մեջ գործածված դերբայական ձևերն իրենց ամենատարբեր նշանակություններով: Այդ ձևերն, ընդ որում, հանդես են գալիս ինչպես գրաբարի համակարգային սահմաններում, այնպես էլ դրանից դուրս:

Իսկ թե որ դերբայը ինչ հաճախականությամբ և քերականական ինչպիսի նշանակությամբ է հանդես գալիս Սյունեցու պատմության մեջ, առանձին-առանձին կանդրադառնանք ստորև:

Գրաբարն ունի չորս դերբայ՝ անորոշ, անցյալ, ապառնի և ներկա (ենթակայական): Նշված բոլոր ձևերն առկա են Օրբելյանի երկում:

Անորոշ դերբայը, որ գրաբարում հայտնի է չորս լծորդությամբ՝ ա, ե, ի, ու (մեկ բայ էլ ու լծորդությամբ՝ գոյ), նույնությամբ հանդիպում է Օրբելյանի մոտ՝ ե- հասանել, վայելել, ընտրել, բաշխել, պահել, ունել և այլն: Ինչպես գիտենք, գրաբարում ի լծորդության անորոշը ներկայացվում է ե խոնարհման բայերի անորոշի տեսքով կամ սահմանական եղանակի ներկա ժամանակի 1-ին դեմքով (իմ): Սակայն Օրբելյանի երկում մեծ հաճախականություն ունեն անորոշ դերբայի –իլ մասնիկով ձևի կիրառությունները՝ սխալիլ, գթիլ, պատերազմիլ, հասանիլ, խառնիլ, ապստամբիլ և այլն, որոնք արտահայտում են ո՛չ կրավորականի նշանակություն, ո՛չ էլ հանդես են գալիս իբրև կրավորակերպ չեզոքներ, օրինակ՝ ...*Պարեթրազմիլ* ընդ Վախթանգայ թագաւորին Վրաց...՝ Իսկ հետևյալ օրինակում *կարգաւորիլ* բայը դրսևորվել է իբրև կրավորակերպ չեզոք՝ ... Ապա պատշաճ էր և երկնատուրացն դասիլ և սահմանաւ կարգաւորիլ ի մէջ եկեղեցոյ...(78):

Քիչ չեն նաև ա լծորդության բայերը՝ կայանալ (78), դառնալ (12), իմանալ (91), գալ (46), գթալ (52), տալ (60) և այլն: Մինչդեռ նույնը չենք կարող ասել ու լծորդության բայերի վերաբերյալ, որոնք անհամեմատ սակավ կիրառություն ունեն՝ ի տարբերություն նախորդների, ինչը թերևս պայմանավորված է նրանով, որ միջնադարի գրական լեզվում և աշխարհաբարում իշխող են հատկապես ե և ա լծորդությունները:

Ու լծորդության բայեր՝ զբօսնուլ, առնուլ, հատուլ, ընթեռնուլ ևն:

՝ Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 46: Այսուհետև այս գրքից հղումների էջերը կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ:

Պետք է ասել, որ անորոշ դերբայը Օրբեյյանի երկում ամենատարածվածն է անցյալից հետո և իր բազմազան դրսևորումներով հանդիպում է բավականին հետաքրքիր կառույցներում:

Ինչպես հայտնի է, գրաբարում անորոշ դերբայը հանդես է գալիս միադիմի եղանակի բայերի հետ և արտահայտում է գործողության կատարման ցանկություն, կամք, անհրաժեշտություն: Այս դեպքում նախադասության ենթական արտահայտվում է տրական հոլովով, իսկ աշխարհաբար քարզմանվում է ուղղական հոլովով՝ ...Ապա *հարկ էր երկրաւորես* ի մէջ երկնից *կայանալ*... (78): ...Եւ *ինչ հնար էր զնել*... (47): Անորոշ դերբայը հարկադրական նշանակություն ունեցող միադիմի եղանակի բայերի հետ, առանց ենթականի, արտահայտում է ընդհանուր բնույթի հարկադրական կամ անհրաժեշտաբար կատարվելիք գործողություն: Օրինակ՝...Եւ էր նոցա առաջնորդ Կիրիռն և *պարպր էր յայտնել*... (74, նաև՝ 106, 143, 241, 251): Շատ տարածված ձև է անորոշ դերբայի՝ բաղադրյալ ստորոգյալի կազմում հանդես գալը. ...Վասն այնորիկ համարձակիւք ասել... (89), ...հանեցաւ քնակել ի գեղեցիկ Գողթան գաւառն... (36, նաև՝ 37, 39, 41):

Գրաբարում *դասլ* բայի հարադրությամբ անորոշ դերբայը կազմում է հարադրավոր բայ և հանդես է գալիս պատճառականի նշանակությամբ, օրինակ՝ ...Եւ ոչ տայ ասել «Աստուած խաչեցեալ»... (94, նաև՝ 37, 39, 42, 44 ն):

Սակայն Օրբեյյանի երկում պատճառականի նշանակությամբ հանդես է գալիս հատկապես ածանցավոր (ուցան) ձևը: Օրինակ՝ ...Եւ կամէին Յոյնք հակառակաթոռ նստուցանել... (65, նաև՝ 37, 39, 41, 45, 55 ն):

Անորոշ դերբայը հանդիպում է ևս մեկ հետաքրքիր կիրառությամբ. հանդես գալով օժանդակ բայի հետ՝ արտահայտում է հարկադրական եղանակի նշանակություն .

...Նմանապէս և յառաջիկայս է իմանալ... (74):

Հարկ է նշել գրաբարից եկած մի կիրառություն ևս. խոնարհված բայ + անորոշ դերբայ իրար հետ գործողությանը սաստկական իմաստ են հաղորդում. ...Ոչ համարեցաւ պատշաճ ընդ խազարաւ անգիտութեան *կալ մնայ*... (96): Հայտնի է, որ անորոշ դերբայը գրաբարում հոլովվում է ո հոլովմամբ, ընդ որում՝ միայն եզակի թվով և հանդես է գալիս քերականական ամենատարբեր նշանակություններով: Օրբեյյանի երկը բավականին հարուստ է նման ձևերով, այսպես՝ հայցական հոլով՝...Եւ ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ *զլինելն* հաւասար Աստուծոյ Յիսուս Քրիստոս... (91): Սեռական հոլով՝...Ընդեր այժմ զնէի զդա վասն ապրելոյ... (47): Բացառական հոլով՝...Եւ յետ գայս *յարդարելոյ*... (39): Գործիական հոլով՝ ...Բանն *լինելով* մարմին մարդկային *համարելով* զամենայն ելից... (90):

Անորոշ դերբայի սեռական հոլովը, հանդես գալով նախդիրների և նախադրությունների հետ, արտահայտում է զանազան քերականական հարաբերություններ: Այսպես, ի նախդիր + անորոշ դերբայ կառույցը արտահայտում է և՛ ժամանակի, և՛ նպատակի, և՛ պատճառի պարագաների նշանակություն: Նման կիրառությամբ անորոշ դերբայը շատ տարածված է Օրբեյյանի երկում, օրինակ՝ ...Ի բառնալ և *լիջուցանել* զքրիստոսեան ավետարանն... (18): Կամ՝ ...Ձի տեսողաց տեսարանքն շլանային *ի նայելն*... (187, նաև՝ 38, 40, 41, 46 ն):

Անորոշ դերբայը մի՛ արգելական մասնիկի միջոցով արտահայտում է ընդհանուր առմամբ արգելական գործողություն. օրինակ՝ Սի՛ լինել հաղորդ անպաղտութեան գործոց նոցա... (68):

Ինչպես տեսնում ենք, անորոշ դերբայը Սյունեցու երկում հանդես է գալիս իբրև ենթակա, պարագա, խնդիր, բաղադրյալ ստորոգյալի կազմիչ, ճիշտ այնպես, ինչպես գրաբարում: Այս դերբայի վիճակագրական տվյալներն այսպիսին են՝

Ընդամենը՝ 300				
բաղ.ստ.180, այլ խոսքամաս. 62. 120				
ա	ե	ի	ու	գու
60	185	20	15	20

Ենթակայական դերբայը, որ գրաբարում անվանվում է ներկա դերբայ, ունի որ>օղ>աղ վերջավորությունը. այն ավելանում է թե՛ ներկայի, թե՛ կատարյալի հիմքին՝ *ծնող, սպանող, տեսող, արարող* - կատարյալի հիմք, *շինող, ստեղծող, աղաչող, զգեցուցանող* - ներկայի հիմք:

-Ող վերջավորությամբ ենթակայական դերբայը սակավ կիրառություն ունի Օրբելյանի երկում. այն հանդիպում է օժանդակ բայի հետ որպես բաղադրյալ ստորոգյալ՝ ...*Ճնող է խոհականութեան ...* (237):

Այլ օրինակներում ենթակայական դերբայը հանդես է գալիս հոլովված ձևերով (այն հոլովվում է ի-ա խառը հոլովմամբ), ինչը շատ ավելի տարածված կիրառություն է:

Սա նշանակում է, որ դեռևս միջին դարերում ենթակայական դերբայի՝ այլ խոսքամասային նշանակությամբ հանդես գալը արտասովոր երևույթ չի եղել: Օրինակ՝ ...*Չարարչութիւն, որով արարչակից լինի սպեղծողին...* (3): ...Ի ցեղէն Գնթունեաց *զգեցուցանողս* ... (3, 39):

Ինչպես հայտնի է, գրաբարում ենթակայական դերբայի իմաստը սովորաբար արտահայտվում է -իչ մասնիկի միջոցով (գրաբարում այս դերբայի իմաստն արտահայտվում է նաև *ու, ուն, եցիկ, ուչ, օն մասնիկների միջոցով*): Ծիշտ է, սրանք դերբայական ձևեր չեն (այլ խոսքի մասեր են՝ գոյական և ածական), սակայն արտահայտում են գործողություն կատարողի, մի բան անողի կամ լինողի իմաստ:

-Իչ մասնիկը նույնպես ավելանում է ներկայի հիմքին՝ հաստատիչ, համարձակիչ և այլն, իսկ կատարյալի հիմքից կազմվում է պատճառականի և անկանոն բայերի -իչ վերջավորությամբ ենթակայական դերբայը՝ սնուցիչ, կեցուցիչ, արարիչ և այլն:

-Իչ վերջավորությամբ ենթակայականը Օրբելյանի երկում միանշանակ հանդիպում է գոյականի, մասամբ նաև ածականի կիրառությամբ: ... Եւ ի սկզբանն *հասարարիչ* աշխարհի ... (92), կամ ... *հիսացուցիչ* հրեղինաց ... (96.): ...Եւ *հասարարիչըն* օրինեալ եղիցին Աստուծոյ... (237, նաև՝ 3, 132, 155, 203, 237): Հանդիպում է նաև *լինել* բայի հետ որպես բաղադրյալ ստորոգյալ՝ ...Եւ *լինի արարիչ* այնմ իրի... (3):

Դերբայի այս ձևը հետագայում արդեն՝ ժամանակակից հայերենում, առհասարակ ընկալվում է որպես գոյական և ածական ու հանդես է գալիս այս խոսքի մասերին հատուկ քերականական նշանակություններով:

Ենթակայական դերբայի վիճակագրությունն այսպիսին է՝

Ընդամենը՝ 55, -ող՝ 13, -իչ՝ 42	
4-ող	+օժ. բայ
9-ող	գոյակ. նշ.
6-իչ	բաղ. ստ.
36-իչ	գոյ. և ած. նշ.

Ապառնի դերբայը, որի վերջավորությունն է -ոց, նույնպես հազվադեպ է հանդիպում Օրբելյանի երկում:

Ինչպես գիտենք, -ոց վերջավորությունը կցվում է անորոշ դերբային, և եթե *և, ա, ի* (գրելոց, խաղալոց, առաքելոց) լծորդության բայերի դեպքում անորոշը փոփոխության չի ենթարկվում, ապա *ա* լծորդության դեպքում ու-ն աղվում է (թողուլ- թողլոց): Հայտնի է, որ գրաբարում -ոց վերջավորությամբ ապառնի դերբայը օժանդակ բայի հետ կազմում է բաղադրյալ ժամանակ՝ ապառնի ներկա, ապառնի անցյալ և ապառնի:

Մեր քննության արդյունքները ցույց տվեցին, որ նման կիրառությամբ ապառնի դերբայը հանդիպում է մեկ- երկու անգամ: Օրինակ՝ ...Անշէջ հրովն *դարպելոց են* արարողը... (31): ... Եւ նույնք *անցանկոց են* ... (60):

Ի տարբերություն -ոց ձևի՝ Օրբելյանի երկում տարածված է հատկապես -ի (երբեմն նաև՝ -իք) վերջավորությամբ ապառնի դերբայը: Այս վերջավորությունը նույնպես ավելանում է անորոշին՝ գովելի, զարմանալի, ցանկալի և այլն, և հիմնականում հանդես է գալիս

այլ խոսքամասային նշանակությամբ՝ ածականի, մասամբ մակ գոյականի: Ընդ որում, ածականական կիրառության դեպքում, գրաբարի կանոնների համաձայն, հետադաս որոշիչը թվով և հոլովով համաձայնում է որոշյալի հետ: Օրինակ՝ ...Եւ ի դրանն **կամարք գարմանայիք** ի սքանչելի ճարտարայ... (180, մակ՝ 45, 49, 50, 51 ևն): Գործում է մակ այս ձևի նախադաս կիրառությունը՝ ...**Անլուծելի նզովիք** անիծեալ լիցին... (191), ... **Գովելի գործք** քաջութեան... (4):

Գոյականաբար հանդես գալով՝ բնականաբար այս ձևը հոլովվում է՝ ...Բազում անգամ մաղթեաց մա շնորհել **զխնդրեկին**... (76), ... Եւ **երեւելիս** յամենայն Հայաստան... (78): Երկում հանդիպում է մակ -ի ձևի հետևյալ կիրառությունը. օժանդակ բայի հետ գործածվելով որպես միադիմի բայ՝ արտահայտում է կատարվելիք գործողության անհրաժեշտության գաղափար՝ ...Բայց թեպետ ցանկալի է (4), ... Փափագելի է մեզ այժմ (8), ...լսելի եղեն մնա ձայնք երգոց (58):

Ստորև տալիս ենք ապառնի դերբայի վիճակագրությունը.

Ընդամենը՝ 50	
1	-ոց + օժ.բայ
15	-ի + օժ.բայ, լինել
13	-ի (-իք) որպես գոյ.
21	-ի որպես ած.

Օրբելյանի Պատմության մեջ իր տարանշանակ կիրառությամբ աչքի է ընկնում հատկապես անցյալ դերբայը: Գրաբարում հայտնի է -եալ վերջավորությամբ, որը նույնությամբ պահպանվել է միջին հայերենում: Դերբայական մասնիկը ավելանում է անցյալ կատարյալի հիմքին՝ զգացեալ, սիրեցեալ, ծառացեալ, զնացեալ և այլն: **Եւ խխոնարհումներ**ի պարզ բայերի անցյալ դերբայը ունենում է թե՛ կատարյալի, թե՛ ներկայի հիմքով ձևեր, ինչպես՝

բնակիմ- բնակեալ- բնակեցեալ
սիրել- սիրեալ-սիրեցեալ և այլն:

Կարծիք կա այն մասին (Մխիթար Մեբաստացի), թե -եալ-ով ձևերը ներգործական տեղի են, իսկ -եցեալ-ով ձևերը՝ կրավորական²: Սա միանշանակ չի կարելի ընդունել, որովհետև Օրբելյանի մոտ հանդիպում են ձևեր, որտեղ անցյալ դերբայը ցոյական հիմքով է, բայց ունի ներգործականի նշանակություն, օրինակ՝... Այլ զայդպիսի աղտեղի և կորստական վաճառ թե սիրեցեալ էր իմ... (47): Սա գրաբարից եկած ձև է, և ինչպես տեսնում ենք, այս դեպքում նախադասության ենթական արտահայտվում է սեռական հոլովով, իսկ աշխարհաբար թարգմանվում է ուղղական հոլովով:

Կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի անցյալ դերբայը կազմվում է պատճառականի կատարյալի հիմքից, ինչպես՝ հանգչիմ-հանգուցեալ, փախչիմ-փախուցեալ, ճանաչիմ-ճանուցեալ և այլն: Այս ձևերը թեև ունեն պատճառականի կազմություն, բայց իմաստով չեզոք են:

Հայտնի է, որ անցյալ դերբայը գրաբարում բաղադրյալ դիմավոր ժամանակներ է կազմում օժանդակ բայի և լինել բայի հարադրությամբ, բերենք օրինակներ՝...Եւ դարձեալ Բարկայ Միունեաց տեսոն հրամայեալ է... (վաղ. ներկա, 33, մակ՝ 12, 13, 30, 31, 33 ևն): ...Եւ յղեալ զՎարդան գործքն Հայոց ի պատերազմն յԱղուանս առ պարսիկ, որ եկեալ էին անդ... (վաղ. անցյալ, 43, մակ՝ 47, 48, 52, 59, 60, 61 ևն):...Գրգոեալ լինի սա յանօրէն... դրոշեալ լինի... (47, 48, 49, 51, 64 ևն, մ. ժ.): ...Ամենայն հնարք փրկութեան վճարեալ լինէր... (12, 13, 15, 22, 24 ևն, անց. անկ.): ...Ջի լրացեալ լիցի ինն դաս եկեղեցոյ անթերի... (178, 1-ին ապ.): ...Եւ հաստատիչքն օրհնեալ եղիցին Աստուծոյ...237 (2-րդ ապ.):

² Տե՛ս Ա. Արքառամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 170:

Այս դերբայի տարածված կիրառություններից մեկն էլ այն է, որ հանդես է գալիս գու-
գաղթական բայերի կազմում: Այս դեպքում, որպես կապակցության առաջին բաղադրիչ,
հանդես է գալիս դերբայը, իսկ երկրորդ բաղադրիչը դիմավոր ձև է, օրինակ՝ ...Եւ գրգռեալ
շարժեաց վասն համբաւոյ երևեի տանն... (229, նաև՝ 12, 35, 38, 49 ևն):

Անցյալ դերբայը հանդես է գալիս նաև այլ կիրառություններով: Ինչպես գիտենք, այս
դերբայն էլ գրաբարում հոլովվում է՝ ենթարկվելով ո հոլովման (եզակի և հոգնակի թվերով):
Այդ հոլովված ձևերի մի ամբողջություն շարահյուսական ամենատարբեր կիրառություն-
ներով հանդիպում է Օրբելյանի Պատմության մեջ:

Այսպես՝ ուղղ. հոլով՝ ... Երկու եղբարք ճգնաւորք և քաջակոնք, առաջնորդք սուրբ
ուխտին, Մէթ և Պօղոս *կոչեցեալք...* (194): Մեռ. հոլով՝ ... Եվ տեսին զբազմութիւն *հեծեաց*
զի գային (63): Հայց. հոլով՝ ... Եւ *զմիացեալն* որոշեն որոշութեամբ (90): Բացառ. հոլով՝
Եւ ոչ ումեք *ի ժողովեացն* (33): Գործ. հոլով՝ ... Եւ հարուցեալ 150, 000 *հեծելովք* գայ հա-
սան է տեղին ... (61):

Գրաբարում անցյալ դերբայը աչքի է ընկնում նաև ածականական կիրառությամբ:
Որպես որոշիչ հանդես է գալիս և՛ նախադաս, և՛ հետադաս դիրքերում: Հայտնի է, որ հե-
տադաս կիրառության դեպքում գործում է որոշիչ-որոշյալի համաձայնության սկզբունքը՝
... Սրբել զկոապաշտութիւն և խորտակել *զկոռս քարուցեալս* ... (38):

Սակայն Օրբելյանի երկում անցյալ դերբայը որպես նախադաս որոշիչ կիրառվելիս
նույնպես համաձայնում է որոշյալի հետ, ինչպես՝ զերևեալ սուրբսն – (33), զցանկալի աշ-
խարհս (28), զմնացեալ կոապաշտութիւնն ... (39):

Օրբելյանի երկում անցյալ դերբայը հանդիպում է հետաքրքիր կիրառությամբ. այն
առանց օժանդակ բայի հանդես է գալիս որպես դիմավոր ձև, օրինակ՝ ... Եւ ելեալ յէշն և
մտեալ ի գետն... (92):

Այս ձևով հանդիպում է *դառնալ* բայի պատճառական ձևը՝ ... Չայն ընտանութիւն
ցուցեալ..., Գողթան և անդէն *դարչուցեալ* ... (61):

Նշենք, որ անցյալ դերբայը այս պատմության մեջ այնքան ծավալուն կիրառություն
ունի, որ միևնույն նախադասության մեջ գործածվել է մի քանի նշանակություններով, այս-
պես՝ ... Իսկ *անհիծեալն* Յիսուսի *ի գործ ածեալ* գայս ոճիրս, երկոտասան օր երեկօքս ա-
րարեալ՝ անց գնաց ... (136):

Այստեղ առաջինը որոշիչ է, իսկ մյուսները ընդհանուր ենթակա ունեցող բայական
ձևեր են: Ստորև ներկայացնում ենք այս դերբայի վիճակագրությունը.

Ընդամենը՝ 500
330-ը բաղ. ստ., որից 230-ը անց. դբ. + օժ. բ.
100-ը՝ անց. դբ. + յինել
170-ը այլ խոսքամաս. նշ. (100 գոյ., 70-ը անծ.)

Ինչպես տեսնում ենք, դերբայական ձևերը, որ հանդիպում են միջնադարյան պատ-
մագրության մեջ, գալիս են գրաբարյան շրջանից որպես օրինաչափ երևույթ: Սակայն
պետք է նշել, որ միջնադարյան պատմագիրները, այդ թվում նաև Օրբելյանը, ինչքան էլ
փորձում են պատմական երկերի համար սահմանված լեզվական նորմերից շեղվել, այ-
նուամենայնիվ երբեմն գրաբարը համեմտում են ժամանակի խոսակցական լեզվին հատուկ
քերականական իրողություններով ու ոճական հնարանքներով:

Հեղինակը երկում գործածել է միջինհայերենյան շրջանում նոր ձևավորված և գրա-
բարի անցյալ դերբայի տարբերակներ համարվող *-ած* և *-եչ* վերջավորությամբ դերբայա-
կան ձևեր:

Գրաբարում *-ած*, *-ուած* մասնիկներով կերտվում էին գոյականի ու ածականի նշա-
նակություն ունեցող բառեր, բայց ոչ բայական ձևեր (յօրինուած, շինուած, հատուած և
այլն): Սակայն արդեն միջին դարերում այս մասնիկներով առաջ է գալիս մի նոր դերբա-
յական ձև՝ հարակատար դերբայ, որ օժանդակ բայի հետ կազմում է բաղադրյալ ստորո-
գյալ: Օրինակ՝ ... Եւ ոչ *էր կարգած* աշխարհս Հայոց ... (15): Հանդիպում է նաև գոյակա-
նի և ածականի նշանակությամբ՝ ... Եւ այլ բազում *յօրինած շինուածս* ... (110):

Ընդամենը 25
7-ը բաղ. ստ. (+ օժ. ք.)
18-ը այլ խոսքամաս. նշ., որից
8-ը ած., 10-ը գոյ.

Հարկ է նշել, որ Պատմության մեջ մեկ անգամ հանդիպում է անցյալ դերբայի տարբերակ համարվող - ել վերջավորությամբ վաղակատար դերբայի կիրառություն (եալ >ել)՝ ... Միս այսպէս շիջաւ ճրագն քրիստոնէից, որ կայր *մնացել* յամուրսն Բաղաց... (էջ 112):

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ, ճիշտ է, Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Միական» երկում եղած շեղումները սակավաթիվ են, բայց ապացույց են այն բանի, որ V դարի գրաբարի և միջին դարերի գրաբարի միջև տարբերությունները զգալի են:

Э. Х. АРУТЮНЯН - *Употребление наречных форм в "Истории" Степаноса Орбелляна.* - В статье рассматриваются языковые явления периода, когда грабар (древнеармянский язык) уже сдавал свои позиции и постепенно расширялись сферы употребления народно-разговорного языка и диалектов, которые проникают уже в письменную речь.

Автор выделяет употребление новых наречных форм с окончаниями на - *ալ* и -*ալ*. Хотя подобные формы не имели широкого применения, они являются доказательством того, что различия между грабаром V века и грабаром средних веков ощутимы.